

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20/1/11


329.14

Ն 66


495

Եժեզեհ Դ.

Կենտրոնական Զանգ Դրամ







Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր «Ջ Ա Հ Ա Կ Ի Ր» Թ Ի Ի 8

Գ. Ն Ժ Գ Ե Հ

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ  
ՀԱՅ ՄՏԱԻ ՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ



59.  
«Հրապարակ»

1928  
ԳԵՏՈՒԹ



329.14  
7, 66

Գ. ՆՅԳՅԶ

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ  
ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ




39.

«Հրատպագր»

1939

ԳՅՈՐԱԻՔ

80444



# ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա.

Քննադատել-հոգեպէս ցառապել  
է նշանակում :

Վերջին տասնամեակի դէպքերը — թրքահայոց կոտորածը, Հայաստանի ստեղծելիլը, նրա կորուստը, Ռուս-տառեկական նոր սահմանադրումը, սրա հետեւանքով մերձաւոր արեւելքում մեզ համար առաջ եկած ծանր պայմանները. հայրենազուրկ հայութեան տագնապի վիճակն արեւմտեան գաղութներում եւսլն — մեզ դրին նոր իրողութիւնների առաջ :

Ցնցւեց մեր կեանքն իր էական բոլոր կողմերով : Հսկայական փոփոխութիւններ առաջ եկան, ուշագրաւ երեւոյթներ : Եւ հանրածանօթ իրողութիւն է, որ այս զէպքերը զարգացան բոլորովին հակառակ մեր արամադրութեանց՝ արտաքին իրողութիւնների թելադրութեամբ : Մենք անգոր եղանք ուղղութիւն տալ նրանց : Այս նշանակում է թէ ներքուստ մենք պատրաստ չէինք դէպքերի իմաստը հասկնալու, զանոնք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձրնելու :

Մենք ունէինք հոգեբանական մի սարսափելի թերի և բնական է, որ հետեւանքը այլ բան չէր կարող լինել քան այսօրուայ անմիօթար կազմութիւնը :

Սակայն այս կազմութիւնը առանձնապէս ողբերգական բնոյթ է ստանում այն պատճառով, որ մինչ մի կողմից ազէաներից ու փորձութիւններից յետոյ պատմութեան բերումով մեր ժողովուրդը հասունանում է, նրա մէջ անկախութեան գաղափարը ժողովրդա-



կանանալով դառնում է հոգեբանութիւն, միւս կողմից նա տկարացել է, փոքրացել և մորեւելքի պայմաններում մի ինքնուրոյն պետութիւն ստեղծելու համար—  
թւական ոյժի տեսակէտից—դարձել է խնդրական :

Բնական է, որ հայոց պետութեան կորիզը պիտի կազմէ Սորհրդային Հայաստանը իր 28,000 քառ. քիլոմետր տարածութեամբ և մօտ մի միլիոն բնակչութեամբ : Չլինէին մահմեդական արեւելքի իւրայատուկ պայմանները և իսլամ ժողովուրդի փոխյարաբերութիւնները . դարերի արիւնոտ իրողութիւններով հոգեբանութիւն դարձած անհանգուրժողութիւնը, թուրք-թաթար ժողովուրդների քաղաքական ձգտումները, գուցէ անկարելի չլինէր Սորհրդային Հայաստանի աստիճանական զարգացումը և աւելորդ մեր մտահոգութիւնը :

Սակայն մի ակնարկ քարտէսի վրայ կրաւէ հասկնալու այն, թէ ի՞նչ է սպասում մեզ :

Այդ փոքրիկ Հայաստանի ռազմագիտական բոլոր կարեւոր կէտերը խլուած են : Նա պաշարուած է մեր դարեւոր թշնամու կողմից, Այդ պաշարումը դրուած է այ՛ւպիսի հաշիւներու վրայ, որոնք մի ակնյայտնի իմաստ ունին, յարմար պարագային նուազագոյն զոհողութիւններով եւ ամենակարճ ժամանակամիջոցում բնաջնջել հայութիւնը :

Հայաստանը խոցելի է միշարք տարբեր կէտերից . ընդամէնը մի քանի ժամւայ ընթացքում այդ կէտերով թիւրքիան\* կարող է կտրել, իրարից բաժանել հայ-

---

\*Պայմանագրերն ապրում են այնքան ժամանակ, որքան ապրում են նրանց ծնունդ տւող պայմանները : Թրքո—բոլշէւիկեան պայմանագրին կարող են առաւելնել միայն նրանք, որոնց տգիտութիւնը ներելի չէ մեր դարում :



կական դաւառակները և միանալ Ազրբէյջանին :

Թե՛նամիք ունի մեզ բնաջնջելու վնիւ, մե՛նք չունի՛նք  
քնքնապատպանութեան ծրագիր, եւ ի՛նքնապատպանունակ  
գե՛նք :

Այկայն, տարիներն անցնում են և ոչ մի փորձ  
այդ ուղղութեամբ :

Մի շափազանց ուշագրաւ և ցաւալի պարագայ  
է սա : Այդ նշակում է, թէ մեր ժողովուրդը ոչ միայն  
պատերազմի և խաղաղութեան մասին սխալ ըմբռ-  
նում ունի, այլ և անուղղայ է իր անփութութեան  
մէջ՝ դէպ սեփական գոյութիւնը, զուրկ խրատելու և  
հրահանգելու ընդունակութիւնից, անկարող ըմբռնե-  
լու մի տարրական ճշմարտութիւն, թէ՛ խաղաղա-  
պաշտ և անարի ժողովուրդները պատերազմից անհա-  
մեմատօրէն աւելի են տուժում :

Բարոյանիւթական պրօգրէս—ասել է՝ ներոյժ  
ինքնապաշտպանութիւն : Պրօգրէսի հրամայականն է  
ինքնապաշտպանութիւնը : Այլեւս ոչ ոք է հաւա-  
տում—մեր ժողովրդից զատ—թէ կարելի է կանգնեց-  
նել պրօգրէսի յաղթական կառքը՝ գետինը փռած  
պարտաւանների և թոյլերի հառաչանքներով : Այլեւս  
ոչ ոքի համար է գաղտնիք թէ պետութիւնները բնա-  
կան հակառակորդներ են, որոնցից ամեն մէկը ձգտում  
է տարածել, ուժեղանալ, շահել իր հարեւանների  
հաշիւն : Յարձակում է, ով իրեն ուժեղ և պատրաստ  
է զգում յարձակելու՝ լաւագոյն պաշտպանողականը  
համարելով նախալարձակողականը :

Յարձակում է նա ով որ իր դիմացը թուլութիւն  
է տեսնում :

Սմէն մի ժողովուրդ, երկաթէ անճրաժեշտու-  
թիւնից մղւած, նախապատրաստում է, անում այն,  
ինչ որ անում են բոլորը :

Թոյլը սարսափում է՝ չլինի թէ կուլ գնայ ուժեղին, իսկ ուժեղը արթուն հսկում է, որ իր հակառակորդը չգերազանցէ իրեն :

Սև խաղաղապաշտ ու անարի ժողովուրդները տկարանում են և դառնում որսը նրանց, որոնց ոյժը անում է և ծաւալւում անդիմադրելիօրէն :

Հասկնանք և հետեւեալը .

— Յանուն խաղաղութեան չեն կնքում պայմանագրերը, այլ յանուն պետութեանց օրւայ կենսական շահերի :

Պետութիւնները հաշւի են առնում միջազգային իրաւունքը և յարգում իրենց ստորագրած պայմանագրերը քանի դեռ շահում են գոյութիւն ունեցող դրութիւնից . սակայն հենց որ մի այլ դրութիւն, հենց որ մի ուրիշի թղթէ բարեկամութիւնը իրենց աւելի շահաւէտ թւաց՝ նրանք թքում են պայմանաւնագրերի վրայ, լքում իրենց նախկին զինակիցներին և սպառնում աշխարհի խաղաղութեան :

Այս է իրերի առարկայական դրութիւնը, այս է իրական աշխարհը և ոչ այն, որի սխալ և խարուսիկ պատկերացումով օրօրելի է և օրօրւում է մեր սանտիմենտալ ազգը :

Բ

Մի աշխատասէր և նիւթական ապագայի համար այնքան ձիրքերով օժտուած ժողովուրդ, որ նիւթակտն բարիքներ կուտել և ամբարել գիտէ տարւայ բոլոր եղանակների համար, որ ծիծաղելի կը համարէ, եթէ մէկը ամբան միայն արևի գեղեցկութեամբ հիանայ և չմտածէ ձմրան մասին — զարմանալիօրէն իդէալիստ է դէպի խաղաղութիւնը, ազօթում է նրա արեւին և բնաւ չէ հաւատում, թէ պատերազմի ձը-

մեռ կայ :

Սակայն պատերազմը գալիս է հակառակ մեր զանկութեան, որովհետև հակամարտութեան օրէնքն է կառավարում աշխարհը :

Այս ճշմարտութիւնը չէ ուզում հասկանալ մեր ժողովուրդը — դրա համար էլ խաղաղ տարիների քրտնաջան աշխատանքով կուտակած բարիքները պատերազմի օրերին տալիս է թշնամուն, իսկ ինքն իբրև մուրացկան ծանրանում է օտարների վրայ :

Մենք կուզէինք, որ մեր ժողովուրդը ևս վերջապէս ըմբռնէր, թէ խաղաղութիւնը ոչ թէ յաւերժական չէ, այլ ժամանակաւոր զինազարար միայն :

Քաղաղութիւնը նոյնիսկ նորմալ վիճակ չէ, խաղաղութիւն չկայ մեր երկրագնդի վրայ, չէ կարող լինել և մարդկային պատմութեան մէջ :

Պատերազմը ժողովուրդների կեանքում անխուսափելի մտնեալ է. — դա չէ մղւում սոսկ գիտակցական հաշիւների համար, դա մէկն է մարդկային էւոլիւցեայի ամենարուսն արտայայտութիւններից : Պատերազմը ընազդ է, — այդ է պատճառը որ մարդիկ պատերազմում են համարեայ ակամայից, դէմ գալով գիտակցութեան պահանջներին, բարոյական օրէնքներին և հետեւանքներին գիտակցարար անդրադառնում, հաշուեւարդարից, յաղթութիւնից կամ պարտութիւնից յետոյ :

Քաղաղութիւնը օրւայ մարդկութեան համար ոչ այլ ինչ է քան յոգնածութիւն :

Պարտած է այն ժողովուրդը որը շուտ է յոգնում :

Պատերազմի է ձգտում նա որ կազդուրւած է :

Պատերազմը կազդուրւածի, առողջի ցանկութիւնն է, ինչպէս որ խաղաղութիւնը թոյլի բազձան-

քըն է, յոգնածի՛ երազը :

Անշուշտ, խաղաղութիւնքը յոգնած ժողովուրդների համար բարիք կը լինէր, եթէ պատերազմից յաղթական դուրս եկածները խաղաղութիւնը չարաշահել չիմանային :

Խաղաղութեան չարացանումն աւելի՛ է աղետաւոր պարտւած ժողովուրդի համար քան նոյնիսկ պատերազմը :

Պատմութեան մէջ քիչ են կոտորածային ոչնչացումների դէպքերը, մինչ հսկայական ժողովուրդներ աննպաստ խաղաղութեան մէջ, առանց արիւնոտ հարձածների, անհետացել են դանդաղօրէն :

Դանդաղ ոչնչացումի մի խաղաղութիւն է մեզ համար, ինչ այսօր իօխում է մեծաւոր արեւելում :

Թշնամին հսկում է ոչ միայն գերեզմանացած Թրքահայաստանի, այլ Խորհրդային Հայաստանի խաղաղութեան վրայ : Ամէն բոլորէ նա կարող է խանգարել այդ խաղաղութիւնը և եթէ մինչև այժմ չփորձեց խանգարել — դա նշանակում է, թէ այդպէս աւելի է նպաստաւոր իր քաղաքական նպատակների համար :

Բոցի այդ դժբախտ պարագան, կան հոգեբանական և այլ կարգի պատճառներ, որոնք մեզ աւելի յոռետես են դարձրել դէպի մեր ժողովուրդի ապագան :

Նախ չափազանց նեղ և աղքատ է ներկայ Հայաստանը :

Ինքնախարէութիւն է յուսալ, թէ Գովկասեան իւրայատուկ պայմաններում, օտար ազդեցութեան ներքոյ, շրջապատւած թշնամի ժողովուրդներով, հայութիւնը պիտի կուտուրատնտեսապէս բարգաւաճի, քաղաքական ոյժ դառնայ՝ պետութիւն ստեղծէ, ներկայ Հայաստանը կազմում է հազիւ 1/12ը մեր

պատմական հայրենիքի : Դա հայրենիք չէ այլ հայրենի անկիւն :

Այժմու իր սահմաններում նա չէ կարող տեղ տալ ի սփիւռոս աշխարհի ցաք ու ցրիւ եղած հայրենազուրկ հայու թեան, դազու թահայու թեան, որի թափառիկ վիճակն աղէտաւոր է երկու տեսակէտից . նախ՝ որ նա ենթակայ է ստոյգ կորստեան, օրինակ՝ Թիւրքիայում կոտորածի, այլ վայրերում՝ խաղաղ ընաջնջումի. ձուլումի :

Հայրենի անկիւն և թափառական ժողովուրդ : Մի ճակատագիր . որ երկմտութեան և տատանումի է մատնել է մեր ժողովուրդը . այսինքն՝ աղքային յուստեսութեան : Իսկ վա՛յ այն ժողովուրդին, որ վարակւած է այս հիւանդութեամբ . այդպիսին կանգնած է գերեզմանի ափին :

Չարսափին՝ ք, բայց և առանց սին պատրանքների և աւելորդ նախապաշարումների ընդունենք այդ դառնադառն ճմարտութիւնը՝ — մեր ապագան վտազուլած է :

Գ

Անխմատ կը լինէր այս ճմարտութիւնն ընդունիլ, եթէ դա մեզ միայն սարսափի պիտի մատնէ և ոչ ցնցէ :

Ծնցումները ժողովուրդների կեանքում փրկութեան լծակներ են : Անբարոյական է և կորած մի ժողովուրդ, եթէ գոյութիւնն ապահովելու համար անընդունակ է խոր ցնցումների :

Հոգեկան ցնցումների ընդունակ ժողովուրդները միայն կարող են վերանորոգել : Ազիտաւոր չէ՛ կորուստներ ունենալը, այսինքն՝ անցեալի դէպքերից խրատելի, փորձելի, սթափելի, չիմանալը . պարզ՝ ազիտաւոր է վերազնահատումների անընդունակ լինելը :

Առանց վերագնահատումի անհիմաստ է որոնումը, իսկ առանց որոնումների ոչ քե միայն ժողովուրդների միտքն է մեռնում, այլ եւ հենց իրենց ժողովուրդները :

Վերագնահատումի պիտի ենթարկենք ոչ միայն զէպօքերի աւարկայական բնոյթը, այլ մանաւանդ մեր հոգեւոր կեանքի ենթակայական տարրերը :

Պիտի որոնենք, փնտոենք, գտնենք մեր դժբախտութեանց իրական պատճառները, ճանաչենք մեր իսկական վէրքերը, այստորոշանքի պիտի ենթարկենք մեր ժողովուրդի հոգին, որից յետոյ միայն խօսք կարող է լինել բուժումի մասին :

Իսկապէս, ինչո՞ւ պարտեց եւ բարեկամներից լըճեց հայ ժողովուրդը :

Ո՞վ է մեղաւոր, երկրին աշխարհագրական դիրքը, քրիստոնէական Յւրոպան, մահմեդական Ասիան, ճակատագիրը : ..

— Բոլորը բացի մեզնից, այսպէս կը արամարանէ մեր անուղղայ քաղքենիամտութիւնը :

Այո մտայնութիւնը... զանգատուում, դժգոհում է նա, անիծում է ճակատագիրը եւ կրկնում անվերջ, թէ ինկած ենք աշխարհի մեծ ճամբաների վրայ, թէ աշխարհագրական ճամբաները վատ են :

Այստեղ կայ մի խղճուկ ճշմարտութիւն, բայց դրա հանդէպ ի՞նչ հոյակապ առաւելութիւններ : Չէ որ մեր բարձրաւանդակն անառիկ է, մեր լեռները մէկ մէկ անխոցելի պատնէշներ : Անտեսել այս Բրողութիւնը եւ ողբալ ճակատագիրը ոչ այլ ինչ է քան թոյլի, անարիի ինքնարդարացում : Թոյլի ինքնարդարացում — ակարի հոգեբանութիւն : Այստեղ ոչ միայն նախապաշարում կայ, այլ եւ առաքինութեան թերի :

Անարգար կը լինէր հաւատալ հիւանդներին, երբ որանք զանգատուում են աշխարհից :



Աշխարհը պատկերացում է, իսկ պատկերումի աղբիւրը սեփական հոգին է:

Հոգու հիւանդութիւնն ունին ժողովուրդները, երբ դժգոհում են իրենց հայրենիքից:

Գուցէ իրօք աշխարհի ամենէն անառիկ բարձրաւանդակներից մէկի վրայ բազմած ժողովուրդը անարժան է իր ճակատագրին, բայց ճակատագիրը՝ երբն՝ ք ազերախտ:

Լինէր հզօր՝ աշխարհի այդ հոյակապ կամուրջի վրայ հրաշքներ կը գործէր հայութիւնը: Տկար էր, տկարացաւ — դառաւ անարժան իր բնաշխարհին:

Հիւանդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչև այժմ երկու առաքինութիւն է ունեցել — իր դժբախտութիւնները վերագրել արտաքին պատճառների եւ փրկութիւնը յուսալ արտաքին ուժերից:

Այստեղ է պատճառը մեր տարօրինակ հաւատի եւ խանդավառութեան, երբ օտարը խոստումներ է կատարում, եւ նոյնքան տարօրինակ հիասթափութեան եւ յուսալքումի, երբ նա դրժում է իր խոստումները:

Աղէտալի ինքնաժխտում, որ մեզ հոգեբանօրէն այնքան անարժէք է դարձրել, որ անգամ մեր դրժախտութեանց մէջ մեղքի որոշ բաժին էլ մեզ տալը զլանում ենք: Մենք այնքան անարժէք ենք թւում մեզ, որ չենք կարծում, թէ քաղաքական աշխարհում ռեէ բանի պատճառ — անգամ դժբախտութեան — մենք կարող ենք լինել: Ամէն ինչ լինում է, գուցէ մեզ համար, բայց մեզնից դուրս, անկախ մեզնից: Քաղաքական մի կոյր պատեհապաշտութիւն, որ մըթադնել է մեր քաղաքականութիւնը անգամ մի կոպիտ, մի աղաղակող ճշմարտութիւն տեսնելու — այն է թէ մեր դժբախտութիւնները համար մեղաւոր են ոչ թէ բուրբ բացի մեզնից, այլ նախ եւ առաջ մեզ:



Տարօրինակ է -- արամարանում է մեր քաղաք-  
ն/ամտութիւնը — մեր հաւատքը դէպ Ներուպան կոյր  
զգացում էր, մեր ներողամտութիւնը դէպ թշնամին  
քրիստոսան, բայց և այնպէս մենք ջարդուեցինք ու՝  
լքուեցինք:

Ոչինչ կայ տարօրինակ, ջարդուեցինք և լքուե-  
ցինք, որովհետեւ եւրոպացու հոգեբանութեան բոլորո-  
վին անծանօթ էինք:

Դէպի Ներուպան մենք ունէինք մի քրիստոնէա-  
կան զգացում և շնորհիւ մեր տարօրինակ միատիցիզ-  
մին — մեր ազգային հիւանդութեան — մեր սեփական  
արամադրութիւնները դրել էինք, Ներուպացու հոգու  
մէջ և ամենախոր կերպով հաւատացել, թէ բոլոր  
քրիստոնեայ ժողովուրդները նոյն զգացումն ունին մեզ  
հանդէպ, թէ բոլոր պատերազմները մղւում են յանուն  
մեր փրկութեան:

Այս ինքնախաբէութիւնը մղեց մեզ քաղաքական  
մուրացկանութեան և քանի որ մենք նաև թոյլ էինք՝  
անձնատուր եղանք լալկանութեան:

Մուրացկանութիւն և լալկանութիւն — մի ամ-  
բող ժամանակի հոգեբանութիւն, քաղաքական մեր  
միակ զէնքը: Լալկանութիւնը, սակայն, ապացոյց է  
հոգեւոր տհասութեան կամ անարիութեան: Մուրաց-  
կանութիւնը զգուելի է ընդհանրապէս: Մուրացկանին  
օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդուած, այլ և  
յաճախ զգուանքից:

Աւելի սարսափելի է քաղաքական մուրացկանու-  
թիւնը, քանի որ քաղաքականութեան մէջ կարեկցանք  
չկայ, իսկ զգուանք՝ շատ քիչ:

Անորակելի է մուրացկանութիւնը քաղաքակա-  
նութեան մէջ:

Աներես մուրացկանի եսականութիւնը բոլորովին ընտանիքն է համարում, որ մարդիկ, թէկուզ ամենէն ինկածները, գլխան իրենւ։

Է՛լ աւելի աներես է մուրացկանը և պահանջկոտ, եթէ նա միաժամանակ և հաշմանդամ է։

Ահա՛ մուրացկանի այս եսականութիւնը և հաշմանդամի պահանջկոտութիւնը դարձել են հոգեբանութիւն։

Հոգեբանական այս երկու մօժէնթներն աւետարանի ներշնչմամբ ստացել են քաղաքական իմաստութեան, դիւանագիտական զէնքի բնոյթ։

Քրիստոնէական մի հօտի համար չքնաղ առաքինութիւն, սակայն միայն քրիստոնէական հօտի։

Այսօր մենք անիծում ենք քաղաքական բարերարներին, սակայն մոռանում, թէ մուրացկանին և հաշմանդամին անկեղանոց են տալիս և ոչ անկեղան հայրենիք։

Երէկ այսպէս էինք, երբ կրօնական հօտ էինք. այսօր յաւակնութիւն ունինք մեզ քաղաքական ոյժ համարելու, բայց չենք ազատագրուել հօտային հոգեբանութիւնից, որը թափանցել է քաղաքական հոտանքների մտայնութեան մէջ, որոնք դրա շնորհիւ անգիտակցաբար կառչել են օրիէնտասիօնների գաղափարին։

Ճիշտ է, նկատելի է մի քայլ առաջ — քրիստոնէական նախապաշարութիւն մինչև օրիէնտասիա — սակայն այդ բոլորի մէջ կայ մի խոստովանութիւն, այն է՝ թէ մեր ժողովրդի որոշ տարրերը քաղաքական կեանքի համար թերեւս պատրաստ չեն, խակ, անոյժ, անարի և ապա բոլորովին չազատագրուած նախկին մտայնութիւնից։

Հայ քաղաքական մտքի դեգերումների մէջ սա

մի երկրորդ շրջան է — մտքի կիսանկախ դառնալու շրջանը:

Այս շրջանը կարճ ժամանակում այնքան աղիտաւոր հետեւանքներ ունեցաւ և թւում է թէ շարունակում է էլ աւելի մթազնել, արիւնոտել մեր ճակատագիրը՝ պառակտելով, ներքուստ թուլացնելով մեր ժողովուրդը:

Այս հոսանքներն արդէն արտայայտութիւն են ստացել մեր կեանքում իբրեւ ուսական կամ արեւմտեան օրիէնտացիայի — խօսք կայ, անգամ Տաճկաստանի մասին — ձգտող քաղաքական խմբաւորումներ, որոնց խելակերոյս, ազգային տեսակէտից անիմաստ բաղխումների հետեւանքով մեծապէս դիւրացուց Հայաստանի անկումը և բաժանումը Ռուսիոյ և Թուրքիոյ միջեւ:

Մակայն, այս մտայնութեան հետեւանքը մշայն քաղաքական կորուստը չէ:

Ամենաստարագիւղին այն համոզումը, թէ ինքը տկար է, կարօտ ուրիշների հովանաւորութեան և այսպէսով կամազրկի, թուլացնի նրան՝ անընդունակ դարձնի թէկուզ իր ինքնապաշտպանութիւնը՝ սեփական ուժերով կազկակերպելու:

Անկախութեան յաւակնութիւն ունեցող ժողովուրդները նախ պէտք է այս մտայնութիւնից ազատուին:

Ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պետութիւն ստեղծել: Պետութիւնը նախասեսում է ինքնուրոյն քաղաքական միտք, պայքարելու ինքնավստահութիւն. կառավարելու նախաձեռնութիւն, իսկ յաղթանակն այլ բան չէ, քան ինքնավստան նախաձեռնութեան պտուղը:

Նշան դէպքեր, երբ մեր այս կամ այն գաւառը մենակ էր, բայց վճռական մինակի հոգեբանութեան շնորհիւ, յաջող կերպով տարաւ իր ինքնապաշտպանութեան դժուարին պայքարը :

Եւ ընդհակառակը, այս դէպքերում, երբ մեր քաղաքականութիւնը արտաքին ուժերի վրայ հաշիւներ արեց — մենք պարտուեցինք չարաչար :

Պարտուեցինք, որովհետեւ այսպիսի հաշիւներով զեկավարուողը զուրկ է վճռական մենակի հոգեբանութիւնից, այսինքն յաղթելու ամէն հաւանակութիւնից :

Քաղաքականութիւնն ընդհանրապէս սարսափում է մենակութիւնից, իսկ օրիէնտացիաների քաղաքականութիւնը այլ բան չէ, եթէ ոչ մենակութեան սարսափը :

Համակեւել է մի ժողովուրդ այս սարսափով — պարտուած է, կորած :

Այստեղ է մեր դժբախտութեան մի այլ պատճառը. ընդունինք այս ճշմարտութիւնը ևս :

Մեր մի շարք հոսանքների օտարահակ արամադութեանց, մեր ինքնավստահութեան պակասի և մեր մենակութիւնից սարսափելու շնորհիւ, մեր ժողովուրդը, որ այլ դէպքում պիտի կարողանար իր ինքնապաշտպանութեան դորձը կազմակերպել յաջողաբար — դարձաւ կամազուրկ մի ամբոյն ու պարտուեց :

Մեր պարտութիւնները հոգեբանական էին, պարտուեցինք ոչ ի՛նչ նրա համար, որ թուապէս ու տեխնիքապէս թոյլ էինք, տկար, այլ որովհետեւ այդպիսին էինք հոգեպէս :

Մի օտարի հսկանու տակ հայը եզակի և ռադիալուն է կռուող է, իր սեփական դրօշի տակ՝ յաճախ

անարի, պարտուողակա՞ն:

Ղարսում մենք ունէինք բնական ու արհեստական դիրքերի գերազանցութիւն, թուական առաւելութիւն, աւելի լաւ պարենաւորում, բայց և այնպէս պարտուեցինք, որովհետեւ չունէինք վճարական մենակի հոգեբանութիւն, ինքնուրոյն կերպով որեւէ բան անելու հաւատ: Պարտուեցինք, որովհետեւ մենք միայն, որպէս ազգ, մասամբ զիտակցեցինք մեր պարտականութիւնը, մասամբ հասկացանք աշխարհի իրական պայմանները, փորձեցինք ոտքի կանգնիլ, բայց ոչ ամբողջովին և ոչ մեր ներքին ուժերի դրդումով:

Պարսեցիքն, որովհետեւ մեր ցեղի ոգու բովանդակ ուժերն օգտագործելու փոխարեն հովանաւորներ փրճեցինք:

Վաղը կը կորչենք խաղաղ — եթէ մնացինք այս մտայնութեամբ: Կը փրկուենք, եթէ ազատուեցինք նախապաշարու մտքերից, եթէ փորձեցինք ոտքի կանգնել, սակայն, ոչ արտաքին դրդումով, օտարների ցանկութեամբ այլ մեր ներքին, բնական, անզուսպ մղումով:

Այսպիսով միայն կ'ազատագրուի և կ'ազատուի որեւէ ժողովուրդ:

Այդ ճանապարհին, եթէ եղան օժանդակիչ ուժեր պիտ օգտագործենք որպէս զինակից, բարեկամ:

Օգտագործել, եւ ոչ աղերսել — ըմբռնե՛ց հայն այս սարքերու քիւր — կանգնած ե փրկուրեան ուղիղ ճամբին:

Մինչև հիմա բարեգործներ և հովանաւորներ ենք փնտրում — հիւանդ ենք, թոյլ և տհաս մտահոգեպէս:

Մրանից յետոյ զինակիցների մասին պիտ խօսենք որովհետեւ հոգեպարտութեամբ, արիանալ ենք ուզում:



Ձինակիցներ և ոչ բարերարներ — այդ նշանակում է, թէ հայն արի է և ինքնապաշտպանուելու, պատերազմելու ընկեր է փնտռում: Քաջի իրաւունքն է դա, նրա՛, որ վճռել է մենակ յաղթել և զինակցում է միայն աւելի հեշտ յաղթելու համար:

Արի ժողովուրդ — սրան են միայն զինակցում, ձեռք մեկնում պետութիւնները: Հասկանա՛ւ ք և այս ճշմարտութիւնը:

Փրկուելու համար պէտ է նաեւ արիանալ, այսինքն՝ յաղթահարել սեփական սարսափը:

Սարսափից ազատագրուած հոգին միայն ընդունակ է աշխարհն առարկայօրէն տեսնել, պատկերացնել:

Երկիւղը միտ է նիւաղներ է սեղծում մտացածին հրէշներ:

Ժողովուրդները յանախ մեռնում են հենց այս ճիւղներէից:


Քաղաքական գիտակցութեան բերին, անիմքնավրասանութիւն, սարսափի հոգեբանութիւն — ահա մեր եւնագլխեան բեւաժին:

Եւ մինչեւ որ չկարողանանք այս ներքին բեւաժին սպանել, անկարելի է, որ արտաքին բեւաժնուց ազատուել կարողանանք:

Ատուած է. չմարդօ մի բան է որ պիտ յաղթահարուիք:

Այսպէս, մինչեւ որ հայ մարդը չկարողանայ ինքզինքը յաղթահարել — սպանել սարսափ անասունն իր մեջ, ներշնչուել նոր մտայնութեամբ, հոգեփոխուել, կարճ՝ մինչեւ որ չդառնայ արի եւ արիանուն ժողովուրդ՝ անհնար է, որ նա կարողանայ ո՛չ միայն քաղաքականապէս ազատուել, այլ եւ ազգովին ոչնչանալու վտանգից խուսափել:

Արեւելքում մեզ համար ստեղծուած պայմանների մէջ կարող է ապրել արի և արիապաշտ հայութիւն:



277

A II 3308



նը, բայց ոչ այսօրուանը :

Պատերազմների մէջ յաղթանակում է արին — այս նշանակում է՝ յաղթում է նա, ով սանձահարել է իր սեփական սարսափը, ով թշնամու հետ շարժուելուց առաջ կառուցել է յաղթանակի շէնքն իր հոգում :

Մեքենական կոպիտ ուժերի բաղխումը չէ պատերազմը, այլ ժողովուրդների հոգեկան կարողութեան :

Դեռ աւելին՝ պատերազմը ժողովուրդների աստուածների գոտեմարտն է : Տեխնիքան՝ զէնքն է, միջոցը հողին՝ պատերազմի դարբինը :

Չէնքն անհրաժեշտ է — սակայն արի բազուկների մէջ :

Պայքարի պատրաստուող ժողովուրդները նախ սպառազինում են հոգերանօրէն :

Անտեսուած է այս պայմանը — անխուսափելի է պարտութիւնը և տեխնիք միջոցների յանձնումը թշնամու :

Յողթելու համար պէտք է սեփական պարտութիւնը յաղթահարել :

Յողթահարել սեփական պարտութիւնը — նշանակում է ընդունակ լինել ինքնապաշտպանութեան, որը ուրիշ բան չէ քան թշնամու պարտութիւնը :

---

Ինքնապաշտպանութիւն՝ ահա՛ թէ ինչ են թելադրում ժամանակն ու պրօգրեսը :

Ինքնապաշտպանութիւն — ահա՛ մեր նոր կրօնը :

Ինքնապաշտպանութիւն — միակ միջոցը որ թէ ժողովուրդների և թէ սրանց աստուածների գոյութիւնն է ապահովում :

Եսականութիւն չէ՛ բնաւ, երբ մի ժողովուրդ իր ինքնապաշտպանութիւնը իր կրօնն է յայտարարում :



Ընդհակառակը, մի արիւնոտ ողբերգութիւն է մղում ժողովուրդներին այս համոզման և ամենէն արդար ժողովուրդները իրաւունք ունին այսպէս վարուելու :

Ինքնապաշտպանութիւնը ոչ թէ բնական իրաւունք է իւրաքանչիւր ժողովուրդի, այլ և պարտականութիւն դէպ մարդկութիւնը :

Ժողովուրդները ապրում են իրենց՝ ստեղծագործում մարդկութեան համար :

Ապրելու արժանի չէ միայն իրեն համար ապրողը :

Ժողովուրդներն ստեղծագործելու պարտականութիւն ունեն — հետեաքար և ապրելու իրաւունք :

Մի ժողովուրդ, որ անընդունակ է ինքնապաշտպանութեան, նշանակում է զուրկ է այդ տարրական առաքիւնութիւններից, — առաքիւնութիւնների, որոնց չափանիշը ինքնապաշտպանութեան համար ցուցահանուած ընդունակութիւնն է միայն : Զուրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանութեան ընդունակութիւնից — նշանակում է նա զուրկ է ամէն առաքիւնութիւնից, զուրկ գոյութեան բարոյական իրաւունքից :

Սրկար ժամանակ աղերսում էինք կեանքի, դոյքի, պատուի՝ ապահովութիւն — այնժամ ոչ միայն տկար էինք, այլ և զուրկ առաքիւնութիւնից :

Ժողովուրդների կեանքը բւնաւորների շնորհը չէ, նրանք չեն կարող ողորմութեամբ ապրիլ և չպէտք է ապրին :

Մակարոյժ է մի ժողովուրդ, եթէ իր ինքնապաշտպանութեան համար յենուում է միայն օտար ոյժի շնորհին : Կեանքում մակարոյժն անբարոյական է, իսկ նմանը տեղ չունի պատմութեան մէջ :

Առանց դայրանալու ընդունինք և այս ճամար-

տութիւնը :

Ինքնապաշտպանութիւնը մի պարզև չէ ուրիշից իրեն, այլ մի բան իրենից — իրեն. մի ազդեցութիւն ենթակայից — ենթակային :

Ինքնապաշտպանութիւնը մի ժողովուրդի գոյութեան ներքին ճիգն է : Մինչև հիմա այդ ճիգն արտայայտեց որպէս աղօթք, աղերսանք, մուրացկանութիւն — հետևանքը՝ հազար և հազար կրաւորական զոհեր : Հիմա ճիգը մեր ներքին ոյժի արտայայտութիւնը պիտ լինի :

Փտած են մեր հին զէնքերը, եղծանւած է հին մագաղաթը : Նոր աւետարանի խօսքը պիտ լսենք հիմա, — աւետարանը արիութեան :

Վահանգնի հետ պիտ խօսենք հիմա, — Աստուածը հին արիակոտն հայութեան : Մի նոր սուրբ գիրք պիտ դուռի մեր ժողովուրդի ձեռքը — աւետարանը արիների :

Արիութիւն — ա՛ս պիտ լինի մեր սիրուելիքների կոչումը, քանզի այդ բարձր յատկութիւնն է փրկում ժողովուրդները ֆիզիքական և բարոյական անկումներից, քանզի աստուածային միակ արժէքն է արիութիւնը, որով ժողովուրդները կը զննն իրենց անկախութիւնը և կ'ապահովեն զայն :

Արդ թէ ինչո՞ւ արիութեան պատգամախօսները պիտ դառնան հայ մտաւոր ևւ հոգեւոր կեանքի բոլոր զեկավարները :

Յւ դպրոց, և՛ եկեղեցի, և՛ քաղաքական կուսակցութիւններ, և՛ մամուլ, և՛ ապակուսակցական կազմակերպութիւններ — բոլո՛րը, բոլո՛րը պիտ համակուին նոր մտայնութեամբ, պիտ կրկնեն նոր ճշմարտութիւններ, կրկնեն անվերջ, անդադրում, մինչև որ արիական ինքնապաշտպանութեան գաղափարը կը դառնայ ժողովրդական մտայնութիւն :

ազնիւ կիրք, հոգեբանութիւն, մինչև որ հայութիւնը կդառնայ ինքնապաշտպանունակ :

Ե

Նկեղեցին :

Դա վերադնահատումի պիտի ենթարկէ քրիստոնէական սիրոյ իր սխալ ըմբռնումը, որպէսզի դադարի թուլութիւնը անաքինութիւն համարել և սպանել մեր ժողովուրդի կամքը :

Սխալ է ըմբռնել զա քրիստոնէական սիրոյ խորհուրդը և դրա հետեւանքով ամբողջ դարեր պատճառ դարձել մեր ժողովուրդի անօրինակ ողբերգութեան :

Սիրում է նա, ով ուժեղ է, ով հոգու անասութիւն ունի, ում ոյժի բաժակը լցւած է յորդելու, թափւելու աստիճան :

Արգասաւոր չէ՛ թոյլի սէրը :

Բձնանքն է թոյլի ներումը :

Գրիստոսը սիրում էր, որովհետև ուժեղ էր. նա սիրում էր, որովհետև սիրելու և ներելու չափ հզօր էր : Նրա անձնական կեանքը պիտ դառնայ եկեղեցուն ուղեգոյց :

Նրա մահուան խորհուրդը— հերոսական զոհաբերութիւն :

Նա զոհաբերեց, որովհետև դադափարի հերոս էր :

Միայն արին, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել :

Անընդունակ է թոյլը ինչպէս սիրոյ, նոյնպէս եւ զոհաբերութեան :

Մի ժողովուրդ, որն ընդունակ չէ այս երկու առաքինութեան— դիպուածների կը պարտի իր գոյութիւնը :

Գրիստոնէան նա՛ չէ, ով քրիստոնէական վարդապետութեան տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մէջ և տկարացել կորչելու աստիճան, այլ նա, ում մէջ մի քիչ քրիստոսութեան

Թիւն կայ—մի կայծ ամենահզօր աստուածամարդու հոգուց :

Նա ամենակարողն էր, ամենահզօր— մենք անուշակ կարող և հզօր պիտի լինինք, որպէսզի կարողանանք սիրել և զոհարեբել :

Մխալե՛լ, չարաչար սխալեւի է մեր եկեղեցին՝ «տնանկնքների և ւսնանկնքների բարոյականութիւն քարոզելով :

Սրանից յետոյ սիրոյ և զոհարեբութեան ընդունակ արի ժողովրդի մասին պիտ խօսի, եթէ ուզում է որ քրիստոնէութեան հետքերը մնան փոքր Ասիայում և Հայաստանում :

Ուժե՛ղ և արիական ժողովուրդ, այնպիսին, որ ընդունակ լինի արհամարհել մահը յանուն իր սեփական գոյութեան :

Այսպիսով կ'ապրի ոչ միայն հայութիւնը այլ և հայոց եկեղեցին :

Ինքնապաշտպանութիւնը հայ ժողովուրդի— անհայ եկեղեցւոյ նոր հաւատամբ :

Ձընդունե՛ց այս ճշմարտութիւնը, չքարոզե՛ց, չտարածե՛ց ամէն օր այս փրկարար զաղափարը, իր բոլոր միջոցներով չնպատե՛ց մեր ինքնապաշտպանութեան գործին— կործանուած է դա :

\* \* \*

Մամուլը :

Նրա պարտականութիւնն է— խտացած ճշմարտութիւններ տալ ժողովուրդին :

Նպատակը— այս ճշմարտութիւններով լուսաւորել ժողովուրդի ուղին դէպի ապագան :

Չունի՛ մամուլն այս կոչումը՝ աւելորդ մակարած չէ դա և զուր տեղը ժողովուրդները կերակրում են դայն իրենց հաշիւն :

Դժբախտարար որոշ բացառութեամբ այսպիսին

է՛ մերը, հայկականը՝

Լրագրութիւն եւ ո՛չ մամուլ—այս նշանակում է, թէ մե՛նք դեռեւս տեսնու եմք, թէ չեմք կարողանում մեր կեանքի ներքին կենսունքը գտնել, լուսաբանել զանոնք եւ մեր միտքն զբաղեցնում եմք արտաքին եղելութիւններով, յուրերով՝

Մեզ համար դեռ այն է հետաքրքիրը, ինչ մեզնից դուրս է կատարուում կամ միայն սրտաքուտ անուն չուրթիւն ունի մեզ հետ։

Այս մտայնութիւնը իշխել է մեր լրագրութեան մէջ համարեայ իր սկզբնաւորութեան օրից։

Փրկութիւնը դուրսից է— այս բաւական է, որ լրագրութիւնը խանդավառութիւն արտաքին բարենպաստ նշաններով, մի դիւանագէտի կարեկից ժպիտով, մի անւանի եւրոպացու հայասէր արտայայտութիւնով, մի միտնորական ընկերութեան հայանւէր ջանքերով, մի խաղաղասիրական կոնգրէ՛ի հայանպաստ բանաձեւով մի պարլամենտական գործիչի զգացած ճառով որեւէ հայկական կոտորածից յետոյ եւ վերջապէս այնպիսի բաներով, որոնք ժողովուրդներէ ինքնապաշտպանութեան կամ փրկութեան համար ոչ մէկ իրական նշանակութիւն ունին։

Եւ այսպէս ամբողջ տասնամեակներ... եւ ոչ ոք է զգացել, թէ այդպիսով մեղսակից է դառնում հայկական ողբերգութեան՝ վրիպեցնելով ժողովրդի ուսողութիւնը իր փրկութեան միակ զենքից — ինքնապաշտպանութիւնից։

Նշե՛լ են լրագրային արտայայտութիւններ, յաճախ նոյնիսկ ինքնապաշտպանութեան ազիտացիա, սակայն այդ բոլորը թերի, ո՛չ դերձ արտաքին ուժերի հանդէպ ունեցած նախապաշարումներից, հետեւաբար ոչ ամբողջովին ճշգրիտ, ոչ օգտակար։

Լրագրութիւն, որ տասնեակ տարիներէ ընթաց-

քում չէ կարողացել իր ժողովուրդի դժբախտութեան իսկական պատճառները մատնանշել հազար և հազար զոհերից յետոյ մի ընհանուր ճշմարտութիւն գտնել և ջանալ այդ ճշմարտութիւնը զանգւածների հոգեբանութիւնը դարձնել :

Լրագրութիւն, որի որոշ օրգանները արտաքին ուժերի հանդէպ ներող են, քծնող, խնկարկող, իսկ ներքուստ՝ պառակտիչ, անհանդուրժող և ամբարտաւան :

Լրագրութիւն, որի որոշ օրգանները ղեկավարւում են փողոցի առաքինութիւններով կամ տարփողելով մեծ ժողովուրդների ոյժն ու հմայքը, վատարար արհամարհում են սեփականը :

Լրագրութիւն՝ որ բորբոքում է թայֆայական կրքերը և ընդունակ չէ մի տարրական ճշմարտութիւն ըմբռնելու այն է, թէ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը մի զործ է, որի մէջ ամեն հոսանքի և ուղղութեան մարդիկ միակամ պիտ լինեն :

Լրագրութիւն, որ տարիների խանդավառութիւնից՝ դէպ օտար յոյսերը, այսօր հիասթափուած հայհոյում է աջ ու ձախ բոլոր ազգերն ու լեզուները և անընդունակ է ըմբռնելու, թէ մեղաւորը օտարները չէին, որ հայ ժողովուրդը չմղուեց, չգիմեց ինքնապաշտպանութեան և ջարդուեց :

Լրագրութիւն որ, ամէն օր ազադակում է, թէ հայութիւնը զոհ զնաց աշխարհակալ ժողովրդների քաղաքականութեան և անգիտակցարար մխրճուելի է դիւանագիտական կնճիռների մէջ, խօսում է օրիէնտացեաների մասին և դիպլոմատիական ծիծաղելի դիլետանտիզմէն :

Այսպիսի լրագրութիւնը աւելորդ է հայ ժողովրդին :

Ինչպէս հայ եկեղեցին, նոյնպէս և մեր մամուլ



լը պիտ հոգեփոխուի :

Լրագիր մենք շատ ունենք, նոյնիսկ աւելորդ, հիմա պէտք է վերագաստիարակիչ հրապարակախօսութիւն :

Լրագրութիւն, որ անսխալ կերպով արտահայտեց մեզ գեղին հոգերը եւ արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկէ մեր անցեալը եւ նոր նշմարութիւններ որոնէ, որ լուսաբանի մեր ժողովուրդի կենդանները եւ ի յայտ բերէ նրա բախուց առաքինութիւնները, որ կուսակի իր ժողովուրդին սպառնացող վտանգը եւ դառնայ նրան հոգեւոր սպառնալիցումի անհազանգը :

Մամուլ, վերջապէս, որ ազատուի օտարահակ մտայնութիւնից եւ արիութիւն քարոզի, որ խլեակնեքի փոխարէն հերոսական ժողովուրդի մասին խօսի եւ այդ այդպէս, մինչեւ որ հայութիւնը՝ խորոտաբար կանգնած իր բարձրաւանդակի վրայ կ'ապացուցէ աշխարհին, թէ ինքը արի է — տէր իր հայրենիքին եւ նակատագրին :

## 2

Հրամայողարար պիտ հոգեփոխուեն նաեւ մեր կուսակցութիւնները — Սրանք մասնաւորապէս : Մեր ներքին հակամարտութիւնները զինակցում են արտաքին թշնամուն՝ ընդդէմ մեր ժողովուրդի եւ երկրին :

Դժւար է հաւատալ, թէ կուսակցամիջեան այլանդակ պայքարի կատաղութիւնը թղխում է միայն դէպ հարազատ ժողովուրդն ունեցած սիրուց, — ժողովուրդ, որի փրկութեան մասին տարբեր ըմբռնում ունեն պայքարող կողմերը :

Մեր կուսակցութեանց պայքարի միակ ճմարտական միջոցը պիտ լինէր բարոյական կշտամբումը եւ ոչ աւելին, ոչ և՛ սուտը, և՛ զրպարտութիւնը, և՛ իրողութեանց խեղաթիւրումը. և՛ նման բարոյազուրկ



ու դատապարտելի դէմքերը:

Մանկօրէն միամիտ են այն կուսակցութիւնները, որոնք ժխտելով մօրալը քաղաքական պայքարի մէջ՝ կարծում են թէ կարող կը լինեն բարոյական մաքրութիւն պահել իրենց շարքերում:

Բարոյականի աղքատութիւն — ասել է բարոյական ուժերի աղքատութիւն:

Ժողովուրդի մի մասի անուշից հայտնել միւսին՝ հակառակորդին և տղայարար ժխտել նրա գոյութեան իրաւունքը — դեռ չէ նշանակում դատտիարկել իր շարքերը:

Անիմաստ և զղւելի է քննադատութիւնը, եթէ ստեղծագործութիւն չէ դա:

Ով օրն իրուն զբազում է իր հակառակորդի թերութեանց քննադատութեամբ — նա անուշազն կոմպրոմիսներ է կատարում իր սեփական յոռութիւնների հետ:

Այդպիսին կարող է շահել, բայց շահած կլինի ի հաշիւ իր բարոյական առողջութեան:

Այդպիսին կարող է և մնասել իր հակառակորդին բայց ինքը ոչինչ կը շահի:

Ստորնութիւնը մնում է ստորնութիւն անգամ այն դեպքում, երբ նա կասաւում է յանուն պննանւիրական օտերի. դա նախ բարոյագրկում է եւ սկարացնում իրենից օգտողին:

Անվերջ բարի խօսել իր կուսակցութեան և շարայլոց մասին — և՛ ծիծաղելի է, և՛ անարդար:

Հոգեպէս անառողջ է նմանը:

Սուժանավարի՝ շարաշահել զանգւածների մութ զգացութեանը և կոյր ատելութիւն զտեղծել հակառակորդների հանդէպ — չէ՛ չէ՛ նշանակում իդէական պայքար վարել:

Այդպիսին ընկածութեան է մղում իր շարքերը:

այդպիսին չալիք է և՛ իրեն, և՛ իր հակառակարդի, և՛ իր ժողովուրդի համար:

Կոյր ատելութեամբ հիւանդ՝ մեր կուսակցութիւններից ոմանք մոռացել են հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան սրբազան գործը, յանուն որի — իրրե թէ — կեանքի են կոչւած:

Նրանք շարունակում են նեղսիրտ և իրարամերձ կռիւք՝ տկարանալով և տկարացնելով մեր ժողովուրդը, խաթարում նրա հաւաքական հոգին՝ կատարում այն, ինչ որ պէտք է արտաքին թշնամուն:

Նւ այդ ամենը միամտորէն կոչում են ժողովրդասիրութիւն, երբ էապէս ժողովրդասպանութիւն եւեղի ունեցողը:

Այո, ժողովրդասպանութիւն:

\* \*

Մտաւոր կարծատեսութիւն է չհասկնալ, թէ անվերջ ու անդադրում վերանորոգութիւն է կեանքը: Հոգեւոր անշարժութիւն — ասել է բարոյական մահ, մահացում:

Անտարբերութիւն, յոռետեսութիւն, բարոյական մահացում — ժողովուրդների անձնասպանութեան դասնադ ձեւերն են սրանք:

Վերանորոգուելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամեն ժամ, ամեն վայրկեան:

Այո՛, հոգեվարում են այն ժողովուրդները, որոնք հոգեպէս ծոյլ են ապրում, որոնք ղեկավարւում են պատահականութեամբ, խճճւած քաղաքական մոլորութիւնների և հոգեբանական սխալանքների մէջ:

Մեր կուսակցութիւնները կամ չեն հասկանում այդ, կամ ժամանակ չունեն հասկանալու:

Նրանց պակասում են ճշմարտութիւններ, որ փրկել գիտենն: Ձկայ, չէ նկատւում մտքի ու ոգու լարում, իսկ ճշմարտութիւնները կարելի է հասկանալ

միայն այդ լարումով: **Ձ**

Ձկայ ստեղծագործութիւն, չկայ բարոյական ուժերի մթերում: Կայ ընդհակառակը, կայ հասացողութիւնների քառս և անարխիա, կայ բարոյական լրճացում, կայ բարոյական մակաբուծութիւն, — հոգեբանական և ի աղիտալի մթնոլորտ. որի մէջ չեն աճում, չեն փթթում բարոյական ոյժեր:

Իսկ նման մթնոլորտում կը դաստիարակեն անարի, փոքրագի և պարուռողական սերունդներ միայն — անարի ժողովուրդ, որի ուժերի մեծագոյն մասը ըստ պառւում է վախի և անհանգստութեան մէջ:

Կայ օտարանակ օրիէնտացեաների գերագնահատումն և սրանց խելադար հակամարտութիւնը՝ ծընունդ թոյլերի հոգեբանութեան:

Կայ անվճռականութիւն — ասել է թուլութիւն, ցոյց տւող ազգը մեծապէս արագացնում է և ուժեղացնում թշնամու հարւածը:

Կայ այն ամենը, ինչ որ անյոյս և վտանգւած է դարձնում մեր ժողովուրդի ապագան:

Սեղմ ասած՝ ստեղծել է մի դրութիւն, որ մահուամբ է սպառնում մեր ժողովրդին:

է

Նա — անհատ թէ հաւաքականութիւն — որը բարոյապէս կատարելագործւում է՝ ուղղակի թէ անուղղակի կերպով նպաստում է իր շրջապատի բարոյական զարգացման:

Մեր կուսակցութիւնները՝ թողած բիւզանդական վէճերը և ամէն գնով իրար գետին զարկելու անմիտ ցանկութիւնը, թողած հակառակորդի թերութեանց ամենօրեայ ցուցադրութեամբ իր սեփական այլանդակութիւնները քօղարկելու սին ճիգերը, — թողած ամենը հրամայողաբար պիտ զբաղեն ինքնազատութարակութեամբ:

Անհաս քե ժողովուրդ — սրանք միտ ել անլի ու-  
ժեղ են քան կարիք, քան վտանգը, քան բռնամիտ, — սրանք  
միտ ել կարող են զեթագանցել իրենց, բարձրանալ իրեն-  
ցից, եքք սրանց չե պակասում սեփական ուժերով ոս-  
քի կանգնելու կամքը :

Բարձրանալով՝ հոգեպէս բարձրացնել մեր ժողո-  
վուրդը, ինքնուղղուամով սրբազրել ժողովրդի հոգին :

Գիտակցելով՝ թէ ժողովուրդները չեն պարտւում  
եքք չեն ուզում պարտել, — գիտակցելով այդ ճշմար-  
տութիւնը, զայն մեր կուսակցութիւնները իրենց շար-  
քերի միջոցաւ պիտ ներչնչեն մեր ժողովուրդին՝ սրան  
հոգեպէս բարձրացնելու համար : Մեր կուսակցութիւն-  
ները, սրանց միջոցաւ նա ժողովուրդը խորապէս պիտ  
գիտակցեն :

— Քանի դեռ տրտնջում է, աղերսում, լալիս մի  
ժողովուրդ՝ պէտք չէ՝ օգնել նրան, քանզի այդպիսին  
կամովին հրաժարւում է իր գոյութեան իրաւունքից :

— Չարժէ և չէ՝ կարելի օգնել ընկածին, եթէ  
նրան պակասում է ինքնօգնութեամբ ոտքի կանգ-  
նելու կամքը :

— Ով չէ աշխատում իր բովանդակ ուժերով՝  
իրաւունք չունի ուրիշներից օգնութիւն սպասելու :

— Սեփական ուժերով ինքնապաշտպանւելու  
անընդունակ ժողովուրդները պատժւում են մահւամբ :

— Բրաւունքը ոյժի հասկացողութիւն է եւ ո՛չ տա-  
մաբանական, ինչպէս և պայքարը յանուն իրաւունքի  
— բարոյական հիմքը ժողովուրդների գոյութեան — ա-  
նէժք չէ, այլ օրհնութիւն :

Դատապարտւած է մի ժողովուրդ, եթէ նա իրա-  
ւունքը զոհարելում է իր յանցաւոր հանգստին և ոչ  
ընդհակառակը :

— Թոյլը մեղաւոր է, ուր թոյլ է : Անբարոյականու-  
թիւն է թուլութիւնը՝ ստեղծւած սնուցանելու ոյժը :

ժողովուրդները իրենց թուլութեանց մեղքերը կը քա-  
ւեն որպէս պարտութիւն, ստրկութիւն, որպէս ան-  
փառունակ գոյութիւն :

— Անպարսելի է այն ժողովուրդը, որ դեկալար-  
ւում է ոգու ձեռնով :

Այնտեղ, ուր կայ ոգու, ասել է՝ բարոյական ու-  
ժերի ապացոյցը — այնտեղ թուական գերազանցու-  
թիւնը, քարը, մետաղը գրեթէ կորցնում են իրենց  
նշանակութիւնը : Ոգու հետ զինակցողը բարոյական  
ուժերի հետ է զինակցում, որի միջոցներն աճում են  
անհաւատալիութեան աստիճան, դառնում անսպառելի :

— Քլիստ ու դեր ժողովուրդների պամփութեան  
մէջ խաղում են ո՛չ արտաքին պայմանները, ո՛չ քա-  
ղաքական օրիէնտացեան, ո՛չ էլ դիպլոմատները, այլ  
իրենց հոգեբանական նկարագիրը :

— Մի ժողովուրդի գոյութեան արտաքին պայմանե-  
րը հարազատօրէն կապուած են նրա ներքին հոգեկան  
դրութեան հետ : Ասել է՝ ամեն ժողովուրդ այնտեղ է,  
ուր նա հասել է իր բարոյական ուժերի մղումով :

Գիտակցելով այդ ամենը՝ մեր կուսակցութիւն-  
ները, մեր եկեղեցին, մեր դպրոցը, մամուլը պիտ հոգե-  
փսխեն մեր ժողովուրդը :

Գիտակցելով, հարազատելով և գործադրելով այդ  
փրկարար ճշմարտութիւնները՝ մեր մտաւորականու-  
թիւնը պիտ յաջողի վերադաստիարակութեամբ հոգե-  
բանօրէն բարձրացնել հայութիւնը, նրան պիտ յաջողի  
մեր ժողովուրդի ոգու անպարսելիութեամբ ապահովել  
նրա անպարսելիութիւնը — նրա ֆիզիքական և բարոյա-  
կան գոյութիւնը :

\* \*

Պէտք է վերադաստիարակութիւն — իմաստուն  
դաստիարակութիւն է պէտք՝ վերջին խաղաթուղթը  
ապագան վտանգւած ժողովուրդներին :

Դաստիարակութիւն, որ յեղաշրջէր մինչայժմեայ թոյլի մեր հասկացողութիւնը իրաւունքի և քաղաքական բարոյականի, քրիստոնէութեան, ոյժի և թուլութեան, պատերազմի և խաղաղութեան մասին :

Դաստիարակութիւն, որ ազգային հզօր զգացուժով և արթուն գիտակցութեամբ զինէր հայութիւնը, որ արիացնէր և դառնար մայրը բարձր ժողովրդասիրութեան և դաճափարապաշտութեան, մղէր ընդհանուրի շահը միշտ էլ դերադասել անձնականից, թելադրէր անհատին ընդհանուրի երջանկութեան մէջ փնտռել իր անձնական երջանկութիւնը, մտատրամադրէր բոլորին, բոլորին՝ աւելի պարտականութեանց տէր զգալ իրենց, քան իրաւունքների, որ մղէր հայ մարդուն մեռնել ապրելու եւ ապրեցնելու եւ ոչ քե ապրիլ մեռնելու համար, որ իրականացնէր սօցիալական հնարաւոր արդարութիւնը մեր ժողովուրդի մեզ — միակ պատեհաբ անարիների, բնչագուրկների եւ վատերի չգոյութեան, ասել է եւ հայրենիքների անպարտելիութեան :

Փրկարար դաստիարակութիւն, որ տար մեզ անհրաժեշտ առաքինութիւններն այն ժողովուրդների, որոնք արի են և վստահութեամբ կը նային իրենց ազազային որ բարձրացնէր մեզ մինչև գերագոյն բնութեամբ ու զգայնութիւնը, — յատկութիւններ, որոնք կը հարիւրապատկեն ժողովուրդների բարոյական կորովը :

Դաստիարակութիւն, որ հողեփոխէր և փրկէր մեր ժողովուրդը :

\* \* \*

Ահա՛ այս նոր դաստիարակութեան ստեղծադարձ և փրկարար գործին է որ անվերապահօրէն և վճռաբար պիտի լծեն մեր կեանքի և պատմութեան ընթացքը շարժող բոլոր հաւաքականութիւնները՝ ազգային մի բարձր մարմինի հսկողութեան տակ, բնուած



բոյր հոսանքներից :

Հրապարակ հաճելով մեր ժողովրդի հոգեւոր վերա-  
նորոգման անհրաժեշտութեան խնդիրը՝ կուզէի հաւա-  
տալ, թէ մեր մտաւորականութիւնը հոգեպէս անհան-  
գիստ է մեր ժողովրդի ապագայի նկատմամբ, թէ նա-  
մեր ունեցած ահաւոր կորուստներից յետոյ — ժողովր-  
դասպանութեան համազօր կը համարի հինի շարունա-  
կութիւնը և երկաթէ՛ անհրաժեշտութիւնից մղւած՝  
առաքինութիւն կուսնեայ անկուսակցականալ գո՛նէ  
մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան խնդրում :

— Մեր պատմութիւնը յետ այսու աղիտալի սխալ-  
ների կրկնութիւնը չպէտք է լինի, այլ սրբագրութիւ-  
նը :

Ել ոչի՛նչ այն ամենից, ինչ որ արւել է եւ արւում  
է արտախն քեմամու գործը հեշտացնելու նամար — սա  
պիտ լինի ինքնազգաստադումի և փրկութեան հրաւի-  
րող մեր օրւայ աղաղակը :

Սրւե՛ց այդ, վարւե՛ց այսպէս մեր մտաւորակա-  
նութիւնը — վաղն ազգովին պիտ լինենք այն, ինչ որ  
ուզում ենք լինել :


Մարդկային աչքը դեռ չէ տեսել այն մեծութիւնը,  
որին կարող են հասնել անհատներն ու ազգերը՝ իրենց,  
հոգեկան ուժերի զարգացմամբ :

Վաղն այն ժողովուրդներին է, որոնք գիտակցու-  
ն են գործադրում են այս ճշմարտութիւնը :

Վաղը յաղթելու է նա, որը մինչ այդ վաղը  
գու մեջ կը տան յաղթանակը :

Հասկանա՛նք, հարազատենք այս ճշմարտու-  
ղ աշխատենք վաղուայ համար — եթէ չենք ուզ  
կորչել որպէս ազգ :

(Վ Ե Ր Զ)






## ՏԳ. ՀՐԱՋԴԱՆԻ ՄԷՋ

ԿԸ ԾԱԽՈՒԻՆ ՀԵՏԵԻԵԱԼ ԳՐԲԵՐԸ

Ջահակիր (Բ. Թի Գրակ. Հաւաքածոյ) վ. Գ. Ս.	100 դր.
Լեւնահայասանի Հեռուամարք վ. Գեորգեան	40 »
Իօխանուհի Մայեն Մ. Մէթէլ'ԼիՆԿ քարգ. վ. Գ.	30 »
Սրիմանի Քաղաքայեք քարգ. վ. Գ.	30 »
Թիապատր (Առակախոյ) Կոստուհի Տր Սեկիւր	10 »
Ռուսկն ժողովգ. Պատնաւմենե Ն. Եօրկա	5 Ֆրան
Վերադարձը (Թաքերգ.) ժօրժ Րիլօյե եւ Ապահովագրեալ նամակ մր (կատակերգ.)	
Գ. Քուրքէիճի (Մեկ հաստուլ) քարգ. վ. Գ.	2 Ֆրան
Սիւրբահայ երգարան Ենդակազմ (Ա. Դիբ)	25 դր.
Քերթումներ Պետրոս Դուրեան	4 Ֆրան
Զգայեսես Կիւր' ՀԱՆԻ ՊՈՐՏՈ քարգ վ. Գ.	25 դր.
Տասր Պատնաւմենե քարգ. վ. Գ.	6 Ֆրան
Թիվաթ վ. Գեորգեան	4 »

*Հատկանքները 2 1-8*



Յանձնարարութեանց համար դիմել հետեւեալ հասցեին .

Vartan Kévorkian B. P. No 342. BEYROUTH





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0196738



29

A  $\frac{11}{80444}$